

«Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպության մասին

Կանանց ռեսուրսային կենտրոնը (այսուհետ՝ ԿՌԿ) հիմնադրվել է 2003թ.: Այն առաջին ռեսուրսային կենտրոնն էր հետխորհրդային Հայաստանում երիտասարդ կանանց համար:

Կազմակերպությունն աշխատում է կանանց իրավունքների պաշտպանության ոլորտում, մասնավորապես՝ կանանց սոցիալական և քաղաքական գորեղացման, սեռական և վերարտադրողական իրավունքների պաշտպանության, սեռական և ընտանեկան բռնության և խաղաղաշինության ոլորտներում: Մեր հիմնական առաքելությունն է գորեղացնել կանանց, որն էլ կօգնի նրանց լինել ակտիվ քաղաքացիներ:

ԿՌԿ-ն առաջին կազմակերպությունն էր, որ բարձրաձայնեց կանանց և աղջիկների նկատմամբ սեռական բռնության հիմնախնդիրը, հիմնադրելով՝ «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» հկ-ն: Կազմակերպությունը զբաղվում է սեռական բռնության ենթարկված անձանց ծառայությունների մատուցմամբ, ինչպես նաև իրականացնում շահապաշտպան գործունեություն՝ ոլորտի խնդիրներն ավելի տեսանելի դարձնելու նպատակով:

2010թ. ադմկահարույց դատական գործը, որ վերաբերում էր Նուբարաշենի թիվ 11 դպրոցի ուսուցչին, ով երկար տարիներ, սեռական բնույթի բռնի գործողություններ էր կատարում իր սաների՝ նույն դպրոցի աշակերտների նկատմամբ, հանրային պատմություն, կոտրեց սեռական բռնության վերաբերյալ այն կարծրատիպը, որ ՀՀ-ում սեռական բռնություն չկա: Նախկին ուսուցիչը դատապարտվեց 2 տարի ազատազրկման իր աշակերտների նկատմամբ տևական ժամանակաշրջան սեռական բնույթի գործողություններ կատարելու համար: Դատական գործընթացի մոնիթորինգին հետամուտ եղան նաև ԿՌԿ աշխատակիցները:

Այս դեպքից հետո, կազմակերպության նախաձեռնությամբ ձևավորվեց աշխատանքային խումբ, որը աշխատեց ՀՀ քրեական օրենսգրքի գլուխ 18-ի «Սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններ»-ին վերաբերող հոդվածներ 138-142 շրջանակներում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու նպատակով:

Հետագայում ՀՀ ԱԺ պատգամավոր՝ Պետական – իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Դավիթ Հարությունյանի պատգամավորական նախաձեռնությամբ ներկայացվեց ԱԺ քննարկման և ընդունվեց 2013թ. դեկտեմբերի 21-ին:

Կազմակերպությունը մշտապես իր ակտիվ ներգրավվածությունն է դրսևորում կանանց իրավունքներին առնչվող օրենսդրական և քաղաքականության մշակման նախաձեռնություններում (Մարդու իրավունքների ռազմավարություն և գործողությունների ծրագիր, Ընտանեկան բռնության մասին օրենք, ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծ, ՀՀ կանանց և տղամարդկան իրավահավասարության մասին օրենք, ՀՀ գենդերային քաղաքականություն,), ինչպես նաև մասնակցություն ունենում մարդու իրավունքների միջազգային կառույցներին ներկայացվող հաշվետվություններում (Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման Կոմիտե, Համընդհանուր պարբերական դիտարկում, Կանանց կարգավիճակի մասին ՄԱԿ-ի հանձնաժողովի աշխատանքներին և այլն):

Կազմակերպությունը իր գործունեության ընթացքում համագործակցել է մի շարք պետական կառույցների հետ, այդ թվում՝ ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ բռնության վերացման «Թրասթ» հիմնադրամի աջակցությամբ և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ, մշակել է ընտանեկան բռնության ոլորտում մի շարք կարևոր փաստաթղթեր:

ԿՌԿ-ն հանդիսանում է Մարդու իրավունքների տուն-Երևանի անդամ, որն իրավապաշտպան կառույցների միջազգային ցանց է և որի շրջանակներում բարձրաձայնում ենք կին իրավապաշտպանների հիմնախնդիրները:

Կազմակերպության մասնակցությունը հասարակական խորհրդի աշխատանքներին կնպաստի խորհրդի գենդերազգայունությանը և կանանց տարբեր խմբերի առանձնահատկությունների կարևորմանը: